# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ ԷՐ ՀԵՆՐԻ ՐԵԶՆԻԿԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

05.05.2015 19:53

Հայաստանի փաստաբանների պալատում, այսօր՝ մայիսի 5-ին, հյուրընկալվել էին Մոսկվայի փաստաբանների պալատի պատվիրակությունը՝ պալատի առաջին փոխնախագահ Հենրի Ռեզնիկի գլխավորությամբ, ում ուղեկցում էին Մոսկվայի փաստաբանների պալատի փաստաբան, որակավորման հանձնաժողովի անդամ Նիկոլայ Կիպնիսը և Մոսկվայի փաստաբանների պալատի փաստաբան Յուրի Չանչուրյանը:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանը ողջունել է ռուս գործընկերներին Հայաստանում և Փաստաբանների պալատում, և ներկայացրել Պալատում կատարվող աշխատանքները: Հենրի Ռեզնիկը բարձր է գնահատել հայ փաստաբանների միասնականությունը և հայտնել, որ Ռուսաստան այդ հարցը կազմակերպելը բավականին բարդ է, քանի որ միայն Մոսկվա քաղաքում գործում է 9000 փաստաբան:

Գործընկերների ուղեկցությամբ Հենրի Ռեզնիկի գլխավորած պատվիրակությունը շրջայց է կատարել Պալատում՝ ծանոթացել ՀՀ փաստաբանական դպրոցի և Հանրային պաշտպանի գրասենյակի հնարավորություններին:

Հայ փաստաբանների հետ ընդլայնված կազմով հանդիպում-քննարկման ժամանակ արծարծվել են փաստաբանական գործունեությանն առնչվող հարցեր, այդ թվում՝ փաստաբանական գաղտնիքի և հանրային պաշտպանության ինստիտուտի առանձնահատկությունները:

Խոսելով հայկական և ռուսական փաստաբանական ինստիտուտների մասին՝ Ռեզնիկը նշել է,-‘**Մեզ միավորում են մեր վստահորդները: Յուրաքանչյուր փաստաբանի հաջողության գրավականը ունենալ գիտելիք, փորձ, ինչո՞ւ չէ, նաև՝ հաջողություն**’,- հայտնել է փորձառու փաստաբանը:

Հենրի Ռեզնիկը խոսել է փաստաբանների և հաճախորդի միջև կնքնվող պայմանագրի առանձնահատոթյունների, ինչպես նաև փաստաբանների իրավունքների մասին: Անդրադարձ է եղել փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանին տույժի ենթարկելու ինստիտուտին: Խոսելով ռուսական փորձի մասին՝ Ռեզնիկը նշել է,-‘**Փաստաբանին պատասխանատվության ենթարկելու հետ կապված խորհրդի որոշումը դատական կարգով կարող է բողոքարկել միայն փաստաբանը, միայն նա ունի այդ որոշմամբ նյութաիրավական հետաքրքրություն, քանի որ**

**այդ որոշումը միայն իրեն է ուղղված և պատասխանատվության միջոցներն էլ միայն իրեն են ուղղված: Եթե քաղաքացին գտնում է, որ փաստաբանի գործողություններից վնաս է կրել, նա կարող է փաստաբանի դեմ վնասի փոխհատուցման պահանջով դիմել դատարան, բայց ոչ դատական կարգով վիճարկել փաստաբանին կարգապահական պատասխանատվության չենթարկելու՝ Խորհրդի որոշումը: Սա վերաբերվում է նաև այն դեպքերին, երբ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու դիմումով դիմել են պետական մարմինները**՛,- նշել է Մոսկվայի փաստաբանների պալատի փոխնախագահը:

Հյուրերը հետաքրքրվել են, երբ մեղադրյալի բարեկամները փաստաբանի հետ պայմանագիր են կնքում: Ինչիպիսի՞ ուժ ունի այն: Արա Զոհրաբյանը պարզաբանել է հետևյալը,-՛**Այն ժամանակ, երբ մեղադրյալի հարազատները փաստաբանի հետ պայմանագիր են կնքում, հիմք է տալիս, որ փաստաբանը կարողանա տեսակցել իր պաշտպանյալին: Առաջին հանդիպումից սկսած մեղադրյալի հարազատների (պատվիրատու), փաստաբանի և մեղադրյալի հարաբերությունները որոշակի առանձնահատկություններով են կարգավորվում: Մենք մեր վարքագծի կանոնագրքով արգելում ենք փաստաբանին տեղեկատվություն տրամադրել վստահորդ չհանդիսացող պատվիրատուին, եթե նրանց շահերի միջև հակասություն կա: Դեպքեր են եղել, երբ պատվիրատուն մեղադրյալի համար հատուկ փաստաբան է վարձել այն նպատակով, որպեսզի այդ մեղադրյալին պահի իր հսկողության տակ: Մենք այդ ժամանակ փաստաբանին հորդորում ենք, որպեսզի նա ղեկավարվի մեղադրյալի շահերով**՛:

Ռեզնիկը որպես քննարկման հիմնահարց առաջարկել է փաստաբանական գործունեությունը որպես առևտրային կամ ոչ առևտրային գործունեություն դիտարկելու հարցը և նշել, որ Ռուսաստանում այն դիտարկվում է որպես ոչ ձեռնարկատիրական գործունեություն: Ռուս փաստաբանների պատվիրակությունը մեծ ուշադրություն է դարձրել Հայաստանում հանրային պաշտպանի ինստիտուտի զարգացվածության մակարդակին: Հենրի Ռեզնիկը հայտնել է, որ Ռուսաստանը այս առումով բավականին տեղեկատվություն ունի ստանալու: Ավարտին՝ կողմերը պայմանավորվել են հետագայում էլ առիթներ ստեղծել փորձի փոխանակման համար: ՀՀ փաստաբանների պալատին Հենրի Ռեզնիկը

նվիրել է իր հեղինակած գրքերը և հույս հայտնել, որ դրանք պետքական կլինեն հայ փաստաբաններին: Պալատի նախագահ Արա Զոհրաբյանը Պալատի անունից Մոսկվայի փաստաբանների պալատին նվիրել է խորհրդանշական ժամացույց:

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })